ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 97/10

Քաղ. Երեւան 5 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մարտի 5-ի նիստում (արձանագրություն N77/7) քննարկեց Philip Morris Products S. A. ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Նահապետյանի 2009թ. նոյեմբերի 13-ի բողոքը RECESSED IR 962915 բառային ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Մերժման համար հիմք են հանդիսացել «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» 90-րդ կետի 1-ին ենթակետը, համաձայն որի նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն չունի տարբերակող հատկություն եւ նկարագրական բնույթի է:

Ստորեւ նշվում է բողոքարկողի փաստարկները:

Բողոքում նշված է, որ RECESSE բառն այն բառերից է, որը հանդես է գալիս ինչպես որպես գոյական, այնպես էլ բայ և, հետևաբար, ունի բազմաթիվ նշանակություններ, որոնցից են (որպես գոյական)1. ընդմիջում աշխատանքի մեջ, 2. արձակուրդ, 3. հանգիստ վայր, 4. խորություն, խոռոչ, 5. նահանջ, (որպես բայ) 1. խորության, փոսի մեջ տեղադրել, 2. փորել, 3. ընդմիջել, հետաձգել և այլն: RECESSE դերբայը նշանակում է փորած, խորացված, փորակի մեջ տեղադրած:

Հունվարի 27-ի նիստում բողոքարկողը նշեց, որ նշանակություններից և ոչ մեկը չի առնչվում ծխախոտային արտադրության բնագավառին, ուստի RECESSE բառն ինքնին չի հանդիսանում նկարագրական, ներկայացրեց նաեւ սոցիոլոգիական հարցման արդյունքները, համաձայն հարցման արդյունքների, հարցվողների մոտ 92%-ը երբեք չի լսել RECESSED բառը, իսկ 99.9%-ը չգիտի դրա մասին:

Բողոքարկողը նշել է, որ RECESSED ապրանքային նշանը պահպանություն է գտել բազմաթիվ երկրներում, ինչպիսիք են Եվրամիությունը, Ճապոնիան, Չինաստանը, Կորեան, Ռումինիան, Սերբիան, Մոնտենեգրոն, Ալբանիան, Ուկրաինան, Վրաստանը, Լատվիան. Լիտվան, Էստոնիան, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Օմանը, Ալժիրը, Բահրեյնը, Մեքսիկան, Մոնղոլիան և այլն: Այս երկներից շատերում, օրինակ Եվրամիության երկրներում. բնակչության մեծամասնությունը գիտի անգլերեն լեզուն (իսկ Մեծ Բրիտանիայի համար այն մայրենի լեզու է), և նույնիսկ այս երկներում RECESSED բառը չի համարվել նկարագրական և գրանցվել է:

Կոլեգիայի անդամ՝ պրն. Ա.Բաբայանը, ներկայացրեց կոլեգիայի քննարկման արդյունքներն այն մասին, որ RECESSED բառը նկարագրական բնույթ է կրում միայն ծխախոտի ֆիլտրի համար եւ հիշյալ ապրանքային նշանի իրավական պահպանության մերժումը այդ տեսանկյունից ճիշտ է, իսկ ինչ վերաբերում է սոցիոլոգիական հարցմանը, ապա տվյալ բառի նկարագրական լինելը կախված չէ սպառողների կողմից որոշակի ձեւով ընկալելի լինելուց:

Հունվարի 27-ի բողոքարկման նիստում պրն. Ա.Բաբայանի կողմից նշվեց նաեւ, որ անկախ նրանից, թե ապրանքային նշանը իրավական պահպանություն ստացել է այլ երկներում, թե չէ, դա հիմք չի կարող հանդիսանալ այն գրանցելու համար, յուրաքանչյուր երկիր իր մոտեցումն ունի, իր օրենսդրության համաձայն:

Հունվարի 27-ի բողոքարկման խորհրդի նիստում, քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, ընդհանուր քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը որոշեց, որ պահանջվում է գործի ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 49-րդ կետով, բողոքարկման խորհուրդը IR 962915 «RECESSED» ապրանքային նշանի վերաբերյալ դիմումի քննարկումը հետաձգել էր մինչեւ հաջորդ նիստը:

Մարտի 5-ի նիստում Կոլեգիայի անդամ՝ պրն. Ա.Բաբայանը, նշեց, որ նախորդ նիստի ժամանակ քննարկումը հետաձգվել է, որպեսզի փորձաքննության բաժնի հետ պարզվի, թե դասում նշված, որ ապրանքների համար ներկայացված ապրանքային նշանը նկարագրական բնույթ չի կրում:

«Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների» բաժնի կողմից ներկայացվեց այն ապրանքների ցանկը, որոնց համար RECESSED բառը նկարագրական բնույթ չի կրում:

Դրանք են՝ չմշակված եւ մշակված ծխախոտը, ծխախոտային արտադրանքը այդ թվում՝ սիգարները, ծխախոտը սեփական սիգարետները փաթաթելու համար, ծխախոտ ծխամորճով ծխելու համար, ծամելու ծխախոտը, հոտ քաշելու ծխախոտը, ծխախոտի փոխարինիչները /ոչ բժշկական նպատակներով օգտագործելու համար/, ծխելու պիտույքները, այդ թվում՝ սիգարետի թուղթը եւ ծխափողերը, ծխախոտի տուփերը, սիգարետի տուփերը եւ մոխրամանները, ծխամորճերը, գրպանի հարմարանքները սիգարետները փաթաթելու համար, վառիչները, լուցկի:

Լսելով դիմողի փաստարկները եւ կոլեգիայի քննարկման արդյունքները, ընդհանուր քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը որոշեց հայտարկված ապրանքային նշանը գրանցել վերը նշված ապրանքատեսակների համար:

Բողոքարկման խորհուրդը, համաձայն «ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 7-րդ հոդվածի 67-րդ կետի 2-րդ ենթակետի եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի

Ո Ր Ո Շ Ե Ց

Philip Morriss Products S.A. հայտատուի RECESSED (N 962915) միջազգային ապրանքային նշանի կրկնական փորձաքննության դեմ բողոքը բավարարել մասամբ եւ չեղյալ ճանաչել 2009թ. օգոստոսի 15-ի կրկնական փորձաքննության որոշումը:

Գրանցել միջազգային RECESSED (N 962915) ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հայտարկված դասի հետեւյալ ապրանքների համար՝ չմշակված եւ մշակված ծխախոտ, ծխախոտային արտադրանք, այդ թվում՝ սիգարներ, ծխախոտ սեփական սիգարետներ փաթաթելու համար, ծխախոտ ծխամորճով ծխելու համար, ծամելու ծխախոտ, հոտ քաշելու ծխախոտ, ծխախոտի փոխարինիչներ /ոչ բժշկական նպատակներով օգտագործելու համար/, ծխելու պիտույքներ, այդ թվում սիգարետի թուղթ եւ ծխափողեր, ծխախոտի տուփեր, սիգարետի տուփեր եւ մոխրամաններ, ծխամորճեր, գրպանի հարմարանքներ սիգարետներ փաթաթելու համար, վառիչներ, լուցկի:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա.Ազիզյան